ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ»[1]

Պավլիկյան շարժումը մեկն էր այն «ըմբոստություններից» և «խլրտումներից», որոնք տեղի ունեին Առաջավոր Ասիայում վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում։ Այդ շարժումը, ծագելով Բյուզանդիայում, անցել էր Հայաստան՝ իբրև պօղիկյան շարժում, Բալկանյան թերակղզին՝ իբրև բոգոմիլների կամ բոգումիլների շարժում, և արևմտյան Եվրոպա՝ իբրև ալբիգոյանների շարժում և այլն։

Սակայն Հայաստանում այդ շարժումը պատրաստի հող էր գտել այն օղակում, որը հայոց մեջ քրիստոնեության մուտքից հետո ստեղծվել էր շնորհիվ քաղաքական-սոցիալական նոր պայմանների։

Ունենք այն օղակը, որով իրար հետ էին կապվում մանիքեական-մազդակյան-բորբորիտոն-մծղնեից (մեսսալյան) աղանդավորական շարժումները, մի կողմից, և թոնդրակեցոց-արևորդյաց շարժումները՝ մյուս կողմից, չհաշված Բաբանի (Բաբեկի) գլխավորած ապստամբությունները Անդրկովկասում և Առաջավոր Ասիայում։

Այս բոլոր շարժումների և ըմբոստություններ-խլրտումների շարժիչ ուժը, իհարկե, գյուղացիությունն էր, իբրև արտադրող դասակարգ, որը շահագործման էր ենթարկվում թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ֆեոդալների կողմից։ Իսկ շահագործումը ծայր աստիճանի էր հասնում —նորտացման պրոցեսի կապակցությամբ, որն և ստիպում էր գյուղացիությանը գործադրել բոնի ուժ, նույնիսկ զենք, իր տիրակալների դեմ։

Եվ, իհարկե, ճիշտ է դիտել Ֆ. Էնգելսը, երբ աղանդավորական շարժումների մասին գրել է. «Ֆեոդալիզմի դեմ մղվող յուրաքանչյուր պայքար այն ժամանակ (այսինքն միջնադարում) պետք է ընդուներ կրոնական զգեստավորում՝ ուղղվելով առաջին հերթին եկեղեցու դեմ։

* * *

Հայաստանում վաղ միջնադարում տեղի ունեցած աղանդավորական շարժումների մասին գրել են շատերը. ոմանք՝ դիտելով այն իբրև զուտ լոկալ աղանդավորական շարժումներ, ոմանք էլ (Բ. Սարգիսյանը և Կ. Տեր-Մկրտչյանը)՝ հարակից շարժումների կապակցությամբ։ Իսկ Սյունիքի X դարի սկզբների ըմբոստությունը ակադ. Իվ. Ջավախիշվիլին որակավորում էր իբրև պարզապես սոցիալական բնույթի ապստամբություն։ Սակայն սովետական շրջանի գիտնականների բազմաթիվ հետազոտությունների մեջ իր բնույթով մեկուսի տեղ է գրավում Լեոյի (Առաքել Բարախանյանի) հոդվածը «Նորք» ամսագրում, 1922 թ. (№ 1, էջ 130—150)։

---

[1] Р. М. Бартикян. Источники для изучения истории павликианского движения. Издание АН АрмССР, Ереван, 1961, 218 стр. Тираж 2000. Цена 87 коп.

Մասնավորապես պավլիկյան շարժման մասին նշանակալից են վերջերս լույս տեսած հետազոտությունները Հ. Դրեզուարի, Շայդվայլերի, Ե. Լիպշիցի, Կ. Յուզբաշյանի, Ստ. Մելիք-Բախշյանի, Լոոսի, Մ. և Հր. Բարթիկյանների և ուրիշների։

Սրանցից Ստ. Մելիք-Բախշյանի գիրքը «Պավլիկյան շարժումը Հայաստանում» (հայերենը՝ Երևան, 1953 թ., ռուսերենը՝ մեր խմբագրությամբ՝ Երևան, 1955 թ.) ներկայացնում է իրենից հաջող տեսություն պավլիկյան շարժման պատմության, իսկ նորերս լույս տեսած՝ Հր. Բարթիկյանի գիրքը «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները» (ռուսերեն, Երևան, 1961 թ.) ամփոփումն է պավլիկյան շարժման վերաբերմամբ գոյություն ունեցող հայկական ու հույն-բյուզանդական սկզբնաղբյուրների։

Այսպիսով այս երկու գիրքը, մեկը մյուսին լրացնելով և սրբագրություններ մտցնելով քննարկվող նյութի մեջ, պարզապես նպաստում է խնդրի լուսաբանության հետագա վերելքին։

* * *

Հր. Բարթիկյանի գիրքը՝ որի խմբագիրն է հայտնի բյուզանդագետ պրոֆ.-գոկտ. Ելենա Լիպշիցը, լույս է տեսել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։

Այն բացվում է համառոտ առաջաբանով (էջ 5—6) և ներածականով (էջ 7—23), որոնց հետևում են երկու հիմնական գլուխները (էջ 25—104) և բավականին ընդարձակ «Հավելված» բաժինը (էջ 107—257), իսկ վերջում «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը» (էջ 209—216)։

Գրքի հիմնական կմախքը «Հավելված» բաժինն է, ուր բերված են ռուսերեն թարգմանությամբ հայերեն և հունարեն աղբյուրները պավլիկյանների մասին։

Հայերեն աղբյուրներն են. ա. Աղվանից եկեղեցական ժողովի կանոնները, բ. Հատվածներ Հովհան կաթողիկոս Օձնեցու «Ընդդէմ պավղիկեանց» ճառից, գ. Հատվածներ Ղևոնդ հայոց մեծ վարդապետի «Պատմությունից» և գ. Հատվածներ հայոց նախարար Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ասորոց կաթողիկոսին հասցեագրված պատասխան-թղթից (նամակից)։

Հույն-բյուզանդական աղբյուրներն են. ա. «Պետրոս Սիկիլիացու օգտակար պատմությունը՝ Դատապարտում և Հակաճառություն աղանդին մանիքեցոց, որոնք կոչվում են նաև պավղիկյանք, շարադրված Բուլղարիայի եպիսկոպոսապետի համար»—գիտական հրատարակչի կողմից կցված 150 ծանոթագրություններով հանդերձ. բ. «Սրբազնագույն Փոտ[պատրիարք]ի պատումը մանիքեցոց երկրորդ վերածլման մասին» և գ. Պավղիկյանց պատմության համառոտ զրույցը, որը մեզ հասել է Գևորգ Արեղայի ժամանակագրության էսկուրիալի ձեռագրում։

Այս աղբյուրների մանրամասն քննությունն է, որ ներկայացված է գրախոսվող գրքի առաջին և երկրորդ գլուխներում, ուր, սակայն, ընկեր Հր. Բարթիկյանը հանգամանորեն խոսում է նաև այլ աղբյուրների մասին, որոնց թարգմանությունները չի տալիս իր գրքի «Հավելված» բաժնում։

Այսպես, օրինակ, հայկական աղբյուրներից քննության են առնված Դվինի 554 թ. և Պարտավի 768 թ. եկեղեցական ժողովների կանոնները, իսկ հունական աղբյուրներից այլևայլ ժամանակագրություններ, վարքագրություններ և այլ տեսակի գրվածքներ։

«Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրների» դիտական հրատարակիչը, հավասարապես տիրապետելով հայերեն-գրաբարին և հին ու նոր հունարենին, ինչպես նաև եվրոպական լեզուներին, քայլ առ քայլ քննում է հետազոտության նյութին վերաբերող բնագրերը, որոնց մեջ մտցնում է ճշտումներ, սրբագրություններ և այլն, նաև վերանայում է նախորդ հետազոտողների դրույթները, որոնց նկատմամբ ասում է իր հեղինակավոր խոսքը։ Ընդսմին չի կարելի չնշել, որ գրախոսվող հրատարակության փայլուն էջերն են կազմում քննական տեսությունները, նվիրված Պետրոս Սիկիլիացու «Օգտակար պատմության» և Փոտ պատրիարքի՝ մանիքեցոց երկրորդ վերածլման մասին պատումի փոխհարաբերությանց կամ փոխադարձ կապի (առընչության) խնդրին։

Կասկածից դուրս է, որ գրախոսվող գիրքը նշանակալից ներգրում է, մի կողմից, պավլիկյան շարժման պատմության բնագավառում, և, մյուս կողմից, հայ-բյուզանդական փոխհարաբերությանց պատմության համար։

* * *

Ի վերջո, կուզեինք կանգ առնել Հր. Բարթիկյանի գրքի մի քանի թերությունների վրա։

1. Պավղիկյանց և նրանց հարակից աղանդավորական շարժումների մասին խոսելիս անտես է առնված Պողոս Տարոնեցու «Թուղթ ընդդէմ Թէոփիստիայ» (Կ. Պոլիս, 1752)[2]։

2. Ժամանակակից դիտա-հետազոտական գրականությունից հրատարակչի ուշադրությունից վրիպել է Մառաֆիա ա. ե. Օրմանյանի «Ազգապատումը», հ. I (1913 թ., էջ 816—818) և ակադ. Ն. Մառի «Անի» աշխատությունը (Մոսկվա—Լենինգրադ, 1934, էջ 30—31), ուր տրված են արժեքավոր դիտողություններ պավղիկյանց և հարակից աղանդավորական շարժումների որակավորման գծով։

3. Գիրքը թեև մշակված է լավ ռուսերենով, սակայն զերծ չէ ոճական սայթաքումներից, որոնցից այստեղ կնշենք լոկ մի օրինակ։

Տպված է (էջ 27)[3]	ուղիղ՝
К. Тер-Мкртчян, ошибочное представление Иоанна Одзунского о павликианах, что не соответствует тому, что мы знаем о еретиках по греческим источникам, объясняет тем, что «павликиане Одзунского имеют совершенно другое происхождение,...».	Ошибочное представление Иоанна Одзунского о павликианах, **не соответствующее** тому, что мы знаем о еретиках по греческим источникам, **К. Тер-Мкртчян** объясняет тем, что «павликиане Одзунского имеют совершенно другое происхождение,...».

4. Ավելորդ չէր լինի, մեր կարծիքով, պավղիկյանների աղանդի անվան ծագման խնդրի լուսաբանումը ևս, երբ հոլովվում է Պողոս Սամոսատցու անու-

2 Հմմ. մեր հոդվածները՝ «Արշավ» (Թբիլիսի), 1940 թ., № 2, էջ 51—52, «Էջմիածին», 1960 թ., № 4, էջ 38—44։

3 Ընդգծումները մեջբերումների մեջ մերն են. Լ. Մ.-Ռ.։

նը (հմմ. Մ. Օրմանյան, Ազգապատում, I, էջ 816)։ Սրա կապակցությամբ գուցե նպատակահարմար լիներ հայոց հմայիլների հետախուզումը, քանի որ այդտեղ է, որ երևան է գալիս Պողոս Սամոսատցու քրիստոսաբանական դոկտրինան (հմմ. մեր հոդվածները «Христ. Восток» ժուռնալում, հ. III, 1914 թ., էջ 48, 204, և Ն. Մառի դիտողությունը, նույն տեղ, էջ 205, ծանոթագրություն 1)։

* *

Օգտվելով առիթից, կուզեինք նշել նաև, որ պավղիկյանց շարժման հեռավոր արձագանքը առկա է Վրաստանում «Պուբլիկան» տեղանվան մեջ, որով հայտնի է գյուղատեղ մոլոկանների Վլադիմիրովկա կոչված ավանին կից, Ջավախքի Փարվանա լճի արևմտյան ափին[4]։

Իսկ այս հանգամանքը առիթ է տալիս մեզ մատնանշելու առկայությունը Վրաստանում նաև պավղիկյաններին նախորդող բորբորիտոնների և մծղնեից (մեսսելյան) աղանդավորների, ինչպես և հետագա թոնդրակեցիների[5]։

Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

---

4 Լ. Մելիքսեթ-Բեկ, Մեգալիթյան կուլտուրան Վրաստանում, Թբիլիսի, 1939, էջ 60 (վրացերեն)։

5 Լ. Մելիքսեթ-Բեկ՝ 1) Դավիթ «Անհաղթի» Վրաստանում լինելու հարցի շուրջը. «Գրական-բանասիրական հետախուզումներ», 1, Եր., 1946, էջ 259—260. 2) Դավիթ Անհաղթը և Դավիթ Գարեջելին. ժողովածու նվիրված Կ. Կեկելիձեի ծննդյան 80-ամյակին, Թբ., 1959, էջ 208—210, 220—221 (վրացերեն). 3) Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, Եր., 1936, էջ 122. 4) Հայ հին գրականության պատմությունը, Թբ., 1941, էջ 107 (վրացերեն). 5) «Արշավ», 1940 թ. № 2, էջ 53. 6) «Էջմիածին», 1960 № 4, էջ 43. 7) «Կամուրջ» ալմանախ, Թբ., 1961, էջ 347։